



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 32

ՃԱՐԱՐ

7 ԱՊՐԻԼ 1907

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳԱԽԱՆԱՑ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ
Տարեկան 50 Ղրշ.	Տարեկան 54 Ղրշ.	Տարեկան] 42 Ֆր.
Վեցամեայ 25 »	Վեցամեայ 27 »	Վեցամեայ 6 »

Զ Ե Ն Ի Թ

Իր ամէն մասանց մէջ կատարելապէս խնամուած միակ ժամացոյցը զոր կարելի ըլլայ յանձնարարել և երաշխաւորել այն բացարձակ ճշտութեան համար՝ որ իր յատկանիշն է.

ՄԵԾ ՄՐՑԱՆԱԿ ԲԱՐԻՁ 1900.

ԱՐՏԱԳՈՑ ՄՐՑՄԱՆ ՄԻԼԱՆ 1906,

Հանդերձ Ժիւռիի անդամակցութեամբ.

Թուրքիոյ և բովանդակ Արեւելքի համար միակ ներկայացուցիչը

Գ. ՍԱՐԳԻՍՕՅ Ե Ի ԸՆԿ

Մեծ մթերանոց ամէն տեսակ ժամացոյցներու, չղթաներու և գոհարեղէններու.

Կ. Պոլիս, Պաղեհ-գաբու, Օռոգսի-Պաֆ (Էօսկր-Էֆէկսի) վաճառատան դիմաց Թիւ 16,


ԱՐՏՈՆԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(آ. آصادوریان) شرکت صتیبه مطبعه سی — باب عالی جاده سنندہ نو مری ۵۷

ՏՊԱԴՐՈՒԹԻԻՆ Յ. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պաղեհ-Ալի Ասսէսի քիւ 52

Հատոր 40 փարսա



[Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի]
 ֆիանցամայն մեքենաներ
 կը գտնուին

ձեռք ամէն մարդ Սինկերի մեքենան կը գտնէ :

Սինկերի մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ :

- | | | |
|--------------------|---------|--|
| ՉԱՐԱՐԵԱՅ ԳՐԱԳՈՐԾԱՅ | ԲԵՐԱ | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, Թիւ 343 եւ 343 կրկին . |
| | | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ . |
| | ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը . |
| | | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ . |
| | ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համամ . |
| | | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թիւ 13 . |
| | ՍԵՒԻՏԱՐ | Չարչը Պօյու , Թիւ 120 . |
| | | |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնագիտէր զաւառ ներու քոյր փաղափներու մեջ :

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա , Մեծ փողոց , Թիւ 343 եւ 343 կրկին , Տիւզօղլուի տունը :

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ , բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ , որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ , մինչդեռ զէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է :

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅԾ. ՓԱՆՏԱՆ

THE SINGER

[MANUFACTURING COMPANY]



մեքենան լաւագոյն է . սոյն մեքենան ամենէն կատարեւ լաւործուածը , հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԱ. ՏԱՐԻ ԹԻԻ 32

ՇԱՐԱԹ

7 ԱՊՐԻԼ 1907

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ Ա.

ԳՐԱԿԱՆ ԴԱՏԱԿՆԻՔ

ՍԱՐԵՄ-ՍԱՐՔԵՄ

ԲԱՌԱՊԱՅՔԱՐԻՆ


Երանաշնորհ Լեզուապայքարէն ի վեր՝ մեր 80-90 ամենի յիշողութիւնն՝ իր վերջալոյսին մէջ, հաղիւ կ'մտաբերէ բանասիրական պայքար մը, Հայ մամուլի նոր աշխարհին մէջ, ուր Հայերէնի լիակատար ներհունութիւնն իր զէնթիւն այնքան լուսաւորումներ սփռած, և Հայերէնի թերակատար հմտութիւնն իր նատիրէն այնքան խաւարումներ օրացուցած ըլլայ, որքան սարեմ թէ սարեմի Բառապայքարն իր թեր ու զէմ լեզուագիտորէն՝ գերազանց ու ստորազանց փոխասացութեամբն ու քարոզներովը, որոց այնքան պինդ ու պիրկ ուշով հետեւէր, հետաքրքրուէր Հին թէ Նոր Հայերէնի նախանձախնդիր բանասէր ու ընթերցողներ:

Ինչպէս հռչակաւոր Լեզուապայքարին՝

նոյնպէս և համբաւասեց Բառապայքարի նախակարապետը հանդիսացաւ Տէր Բ. Գէշեան էֆէնտի որ, կրթական, կրօնական ու բարոյական Փոքր Ածուի մը, որպէս է մեր ժողովուրդը, մտքի թմրած երակներն ելէքտրացնելու բարենպաստակ արմատական հարցերն յուզելու թաքթաքուրքն ունի իրեն և եթ յատուկ ճարտարմտութեամբ ըն անհաւասարելին:

Ահա թէ յաղթական ՍԱՐԵՄին և պարտեալ սարեմին գուն ի'նչպէս ծագեցաւ:

Բիւզանդիոնի Տէր-Տնօրէն ու խմբագրապետն իր 3122րդ թերթովն հրատարակած Նկարագրականի մը սարեմաւ կոչտ ու կոպիտ բառն իր մաքրապաշտ կամ ընտրողական Հայերէնի ճաշակին ներհակ գտնելով,



[Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի]
 ֆիսկանգամայն մեքենաներ
 կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ ,
 բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ , որովհետեւ լաւ
 մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
 ցանէ , մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
 եւ տաղտուկի աղբիւր մըն է :

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՔ ԿԱՅԺ. ՓԱՆԱՏԱՆ

THE SINGER

[MANUFACTURING COMPANY]



մեքենան լաւագոյն է . սոյն մեքենան ամենէն կատարեւ լաւործուածը ,
 հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ :

Սինկերի մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ :

ՆԱԽԱՐԵԱՅ ԵՐԱՇԽԱՆՈՐԻՔԻՆ

ԲԵՐԱ

- (1. Մեծ փողոց , Պօն Մարշէի դէմ , Թիւ 343 եւ 343 կրկին .
- (2. Մեծ փողոց , Կալաթա Սէրայի Լիսէին դէմ .

ԿՍԼԱԹԱ

- (1. Սինկեր խան , Թիւնէլի ետեւը .
- (2. Դարաքէօյ , Թրամվէյի կայարանին դէմ .

ՊՈԼԻՍ

- (1. Սուլթան համամ .
- (2. Սուլթան Պէյազիտ , Թրամվէյի կայարանին դէմ , Թիւ 13 .

ՍԵԻՒՏԱՐ

Չարչը Պօյու , Թիւ 120 .

Կատարեալ Երաշխանորութիւն

Մասնագիտօրէն գաւառ ներու քոյր ֆաղափներու մեջ :

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա , Մեծ փողոց , Թիւ 343 եւ
 343 կրկին , Տիւզօղլուի տունը :



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԱ. ՏԱՐԻ ԹԻԻ 32

ՇԱՐԱԹ

7 ԱՊՐԻԼ 1907

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ Ա.

ԳՐԱԿԱՆ ԴԱՏԱԿՆԻՔ

ՍԱՐԵՄ-ՍԱՐՔԵՄ

ԲԱՌԱՊԱՅՔԱՐԻՆ

Երանաշնորհ Լեզուապայքարէն ի վեր՝ մեր 80-90 ամենի յիշողութիւնն՝ իր վերջալոյսին մէջ, հազիւ կ'մտաբերէ բանասիրական պայքար մը, Հայ մամուլի նոր աշխարհին մէջ, ուր Հայերէնի լիակատար ներհունութիւնն իր զէնքի մէջ այնքան լուսաւորումներ սփռած, և Հայերէնի թերակատար հմտութիւնն իր նատիրէն այնքան խաւարումներ օրայուցած ըլլայ, որքան սարեմ թէ սարեմի Բառապայքարն իր թեր ու զէմ լեզուագիտօրէն՝ գերազանց ու ստորազանց փոխասացութեամբքն ու քարոզներովը, որոց այնքան պինդ ու պիրկ ուշով հետեւէր, հետաքրքրուէր Հին թէ Նոր Հայերէնի նախանձախնդիր բանասէր ու ընթերցողներ:

Ինչպէս հռչակաւոր Լեզուապայքարին՝

նոյնպէս և համբաւատեցնչ Բառապայքարի նախակարապետը հանդիսացաւ Տէր Բ: Դիչեան էֆէնտի որ, կրթական, կրօնական ու բարոյական Փոքր Ածուի մը, որպէս է մեր ժողովուրդը, մտքի թմրած երակներն ելէքտրացնելու բարենպաստակ արմատական հարցերն յուզելու թաքթաքուրքն ունի իրեն և եթ յատուկ ճարտարամտութեամբքն անհաւասարելին:

Ահա թէ յաղթական ՍԱՐԵՄին և պարտեալ սարեմին գոռն ի'նչպէս ծագեցաւ:

Բիւզանդիոնի Տէր-Տնօրէն ու Խմբագրապետն իր 3122րդ թերթովն հրատարակած Նկարագրականի մը սարեւած կոչտ ու կոպիտ բառն իր մաքրապաշտ կամ ընտրողական Հայերէնի ճաշակին ներհակ գտնելով,

կ'դիտողանիչէ և նկարագրականին մարմինէն դուրս: Ստորեւ կ'ծանօթագրէ սապէս. «Այս «ՍԱՐՔԵՆԷՆ քառը ռուսահայոցմէ մտած մեր «մէջ, թերի հայերէն մ'է, և մենք կ'վե- «բապահենք զայն հեգնօրէն ի կիր արկանե- «լու համար թերի «կազմակերպուած», թերի «կարգադրուած հանդէսներու կամ արարու- «ղութիւններու առթիւ: Ի՞նչ կ'նշանակէ ««սարքել»ն, ո՞ր բառէն ելած է: Սա՞ր, զը- «լուխ: Կամ սարօ՞ք: Թուրքերէն կամ թա- «թարերէն բառերն անգիտակցաբար հայացը- «նելու ռուսահայ ունակութիւնը գիտնալով «մեր մասին կ'կասկածինք թէ սարքել նոյն «է սարմագ բառին մէկ արեւելեան հոմա- «նիչին հետ: Բ. ՔԵՉԵԱՆ

Տիար Տիգրան Էլքէնճեան էֆէնտին ալ՝ Բիւզանդիոնի 3124րդ թիւին մէջ սապէս կ'յայտարարէ.

«Սարքեմ՝ սխալ. ՍԱՐԵՄ՝ ուղիղ, ՍԱՐ «(կամ յոգնակի ձեւով՝ ՍԱՐՔ) «զլուխ» նը- «շանակութիւնէն զատ կ'նշանակէ նաեւ «կազ- «մած»: Դրաբարի մէջ կ'գտնուի երկրորդ «նշանակութեամբ գործածուած ալ: Միւ- «տոնի մէջ գործածուած է «սարք և սթարք «պալարակապը». ձիերու կազմածներու հա- «մար: Կայ «սարքեմ» բայ ալ. որ կ'նշանակէ «կազմել, հանդերձաւորել. «սպառազէն սար- «եալ անդէն հեծնու ի կառսն անդ Որդին»: «Դարձեալ՝ Ամէնայն կազմիւք սարեալ հե- «ծելութիւնք երկնագումարք»: (Նոյն):

«Սարուած բառը կ'նշանակէ «appareil». «ունինք նաեւ «ոսկեսար»՝ կամ «ոսկեսար- «եան»: (ոսկիով սարուած): Դարձեալ «սա- «րուփարթայ», որ կ'նշանակէ «կահուկազ- «մած»: Աւելորդ է ըսել թէ «իւր սարօքն» «աստութիւնը կ'նշանակէ իւր «կազմածով», «իւր «ՊԱՐԱԳԱՅԻՒՔՆ»: Այս բառը թէեւ «պարսկերէնէ առնուած՝ կայ գրաբարի մէջ, «ու թէպէտ սխալ է «սարքեմ» բայց «ՍԱ- «ՐԵՄ»ին ըսելիք չկայ»:

ՏԻԳՐԱՆ ԷԼՔԵՆՃԵԱՆ

Այս հակիրճ ու վճիտ՝ բացատրութեան մէջ՝ լոյսի պէս պայծառ կ'ցուայ սա բա- ցայայտ ճշգրտութիւնը՝ թէ, Տիար Տիգ- րան էֆէնտի Էլքէնճեանի համար, հին թէ նոր Հայ Լեզուին աշխարհագրութիւնն ան-

կոխ տեղ չունի, և ո՛չ ալ անոր պատմու- թիւնը՝ դադանիք, և թէ հայերէնի իր լիա- կատար գիտութեան արդոսեան, արծուէջիւր աչքերն երբէք չունին այն բիժքն ու մթարք, որով բլշացած, պլշկած տեսանք իրեն հա- կառակորդաց թերակատար Հայերէնագէտի կարճատես աչքերը:

Տիար Տ. Էլքէնճեանի այս շատ համառօտ ու անաղօտ բացատրութենէն հայերէնի տար- րական հմտութիւն ունեցողն իսկ կ'հասկնայ՝ թէ բուն հայերէնն է սարքեմ և ո՛չ սարքեմ. թէ սարքեմը սարքեմին աղաւաղումն ու ռամ- կացումն է, թէ արմատն է ՍԱՐ և ո՛չ թէ ՍԱՐՔ, թէ սար ու սարեմ բառերը կրկին նշանակութիւն ունին, թէ շարականներու մէջ իւր սարօքն ասումն ալ կ'նշանակէ իր պարագայիւն հա՛ղերձ:

Տիար Տ. Էլքէնճեան ասով հասկցուց թէ Տփլիսեան կամ Կովկասեան բարբառին յա- տուկ չէ այս սարքեմ (սարեմ) բառը, այլ՝ ոչ միմիայն դարեր առաջ նախնի՝ այլ եւ արդի հեղինակաւոր մատենագիրք ու բառագիրք իսկ սարքեմ ու սար բառերն ի կիր արկած ու բացատրած են իրենց կրկին նշանակու- թեամբ:

Այս շատ մեկին, շատ ճշմարիտ բացատ- րութեամբ հասկցուցած, հաղորդեցած է սա- րքեմ, սարքեմ, սար ու սարք բառերուն մա- սին ի սկզբանէ ցյաւիտեան ըսուելիքն ու գրուելիքը:

Հայերէնագէտ բուն ու ջղջիկն իսկ ան- գամ տեսած պիտի ըլլար՝ թէ Կովկասահայ կամ Տփլիսեան բարբառը կարգ ու սարք բա- ռերու միասնական գործածումէն խաբուելով կամ մոլորուելով՝ բերուեր է գործածել սար- քեմ ճիշդ ինչպէս կարգելը կ'գործածուի:

Սակայն բարք ու վարք. կարգ ու արք բառերն իրարու հետ գործածումէն կրնա՞ն ըսե՛լ, վարք՝ կառք, արք՝ սա յօդուա- ծը, փոխանակ ըսելու վարք՝ կառք, արք՝ սա յօդուածը:

Ժիշդ ի՛նչպէս և ո՛րքան սխալ պիտի ըլ- ար կառք վարք, գիրք արքեմ ասութիւ- նը, նոյնպէս և նոյնքան սխալ է հանդէսը սարքել ըսելու տեղ հանդէս մը սարքել ըսելը:

Վարելու, արքելու տեղ՝ վարք ու ար- քել կիրարկումն ո՛րքան կոշտ ու կոպիտ,

բիրա ու անկիրթ է, նոյնքան ապառուժ ու պանդոյր միտք է սարելու տեղ սարել գործածելու պնդումը:

Մեր վաղեմի ու համակրելի բարեկամն Տէր Յ. Գուրգէն էֆէնտի՝ կարգալէ վերջ Տիար Տ. Էլքէնճեան էֆէնտիին սառ ու սարք, սարեմ ու սարքեմ բառերու մասին գերազանցապէս հեղինակօրէն ու գերազարապէս հմտօրէն՝ ու երեսի պէս բացերու ինչպէս և աչքի նման ակնյայտի բացատրութիւնը, չեմ գիտեր, հայերէնագէտի ճակատագրային ի՞նչ աղէտալի դէպ ու սէգ սայթաքուն բերումով մը, չեմ գիտեր ի՞նչ անախտեղի, անճառելի ու անպատմելի, չըսենք անասելի, անխոստովանելի ուշավրէպով մը կ'յայտարարէ թէ սարեմը սխալ է, սարքեմը ճիշդ է, թէ ճիշդ է սարքուած, և ո՛չ թէ սարքուած, կ'յայտարարէ միանգամայն՝ թէ սարքեմ բային արմատն է սարք, թէ այս բառը Կովկասեան կամ Ռուսահայերէնէ մուտ գրած է մեր մէջ. մինչդեռ Տիար Տիգրան Էլքէնճեան էֆէնտի իր բացայայտիչ ու յատկացուցիչ կորովամտութեամբն հաստատած էր թէ այս բառը Կովկասահայերէն ունի հին է: Եւ հին՝ որքան Հայ լեզուն իր ծագումն ի վեր:

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԹՈՒԼԲԵՐԱՆՈՒԹԻՒՆ

Որպէս զի հաստատուի սա ճշմարտութիւնը թէ՛ Հանրագիտակ օւկանն է գրական high-class-ին, հակառակ իր զուարթ և ժողովրդական ոճին:

ՅԱԶՈՐԻ ԹԻՒՈՎ

Առաջին անգամն ըլլալով

Մեծանուն ու մեծատաղանդ իմաստասէր ու համակրելի բանաստեղծ ԱԶՆ. ԹՈՎԱՐԱՍ ԷԾԷՆՏԻ ՓԷՐՁԵԱՆԻ շքեղ մէկ լուսանդկարը. ինչպէս նաեւ կենսագրական ծանօթութիւններ՝ շատ ծանօթ և կարող գրչէ մը:

Յօդուածներ պիտի ունենան նաեւ

Հանգուցեալ Տօք. Ճելալեանի մէկ անգիր գրութիւնը.

ՏԻԿ. Ա. ԹԵՈՂԻԿ

Յ. ԱԼՓԻԱՐ

ԵՒ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԿԵՍ ՀԱՐՍԵՐԸ

Վեցօրեայ փութկոտ արարչագործութեան մէջ հաղիւ ժամանակ եղած է երկու հրաշակերտներ արտադրելու: Կինը և ծաղիկը:

Նոյն իսկ պնդողներ կան թէ այս երկուքէն վերջինն է որ աւելի արժէք ունի սա պարզ պատճառին համար որ կնկան մը յարգը էրիկ մարդիկ միայն գիտեն. իսկ ծաղիկնը թէ՛ այրերը և թէ կիները:

Աւելի հեռուն երթալով անոնք անպատճառ ձեզ ընդունել տալ կուզեն թէ ծաղիկը գերադաս է կին արարածէն, որովհետեւ — կ'ըսեն — տգեղ կին չաւ կայ, բայց տրգեղ ծաղիկ ոչ մէկ հատ:

Որքան որ ստիպուած չըլլամ ծաղիկմոլներուն պէս մտածելու — ամէն մարդ իր համոզումները և պատճառները ունի — սա կայն նորէն պէտք է խոստովանիմ թէ մասնաւոր պաշտամունք մը ունիմ ծաղիկներուն համար սկսեալ նարնջենի խորհրդաւոր ծաղիկէն մինչեւ ամենախոնարհ միւկէն:

Կայ արդեօք մարդ — զգացողներու աշխարհին մէջ — որ չսիրէ վարդը, յամիկը, մանուշակը, չի պաշտէ կարսեմիան, քամիլիային վրայ չի խենդենայ, և վերոնիքին համար չի մեռնի:

Եթէ ծաղիկը այնքան աղւոր բան մը չըլլար, Աստուած փոխանակ անհնցմով պճնելու եղեմը, Պուլի կարասիներով կը զարդարէր զայն:

Ոչ առաջինն եմ և ոչ ալ կարողագոյնը ծաղիկներուն ներքողականը ընողներուն, սակայն ասիկա չարգիլեր որ վստահօրէն չի հրուշակեմ թէ աշխարհիս վրայ եթէ միահամուռ սիրուած բան մը կայ՝ այն ալ ծաղիկն է, պայմանաւ որ ո՛չ թղթի վրայ տպագրուած ըլլայ և ո՛չ ալ փորագրուած՝ կարմիր աղւոր այտերու վրայ:

Եթէ ծաղիկը չըլլար՝ հարս ըլլալը կէս հրապոյր պիտի ունենար, իսկ չըջանաւորատուի ըլլալը քառորդ հրապոյր:

Շրջանաւարտուհի ըլլալը կէս հարս ըսել է: Ճերմակ արդուզարդ, պսակ և ծաղկեփունջներ:

Ես այնպէս կը կարծեմ թէ հարս ըլլալը աւելի դիւրին է քան շրջանաւարտուելի, որովհետեւ հարս մը արդէն ինքզինքը հաւնեցուցած է, իսկ շրջանաւարտուելի մը դեռ պիտի հաւնեցնէ:

Այդ անցեալին և այս ապառնիին միջեւ կանացի կեանքին ամբողջ սրտմաշուքը կայ:

Եւ իրենց այդ սրտի վիշտերը մոռցնել տալու համար է որ առատօրէն ծաղիկներ կուտանք անոնց:

Ծաղիկները այնքան հրապուրիչ և այնքան գեղեցիկ բան մը ունին իրենց մէջ որ շատ անգամ անոնցմով կապուած փունջերու և անոնցմով լեցուած կողովներու առջեւ հարսեր գտնուած են որք զմայլած, արբիւ, վայրկեանի մը մէջ մոռցած են իրենց դառն անցեալը՝ ինչպէս շրջանաւարտուելիներ վայրկեանի մը մէջ մոռցած են ... ամբողջ գիտցածնին:

Ծաղկեփունջը շրջանաւարտուելին շքնորհքն է:

Կրնա՞ք երեւակայել հարս մը որ ճերմակ շրջազգեստ մը չունենայ, փեսայ մը սեւ րըտէնկող մը և հարսնեւորներ ... ահազին ախորժակ մը:

Այսպէս ալ անպատճառ ծաղիկ, շատ ծաղիկ տալու է շրջանաւարտուելիներուն:

Պէտք է որ անոնք փափազնին առնեն. որովհետեւ եթէ այս ընթացքով քալենք քիչ առնենք աղջիկներու համար ճերմակ շրջազգեստ մը հագնելու և ծաղիկներ ընդունելու միակ միջոցը ... շրջանաւարտուելի ըլլալը պիտի մնայ դժբաղդաբար:

Այս տարուան շրջանաւարտուելիներուն ծաղիկ չը կայ ... հապաքի՛ւ: Երբ զարմացմամբ ասոր պատճառը կը հարցնեմ.

— Դուցէ ծնողքները «փոխան ծաղկեփունջի» տուած են, կը պատասխանեն ինծի:

Ա՛խ, այդ «փոխան ծաղկեփունջը»։ Ով որ այդ գիւտը ըրաւ, կրնայ պարծիլ թէ վերջին հարուածը տուաւ մեռցնելու համար միակ բանաստեղծական և ազնիւ զգացումը զոր դեռ կարելի էր մեր մեծատուններուն քով գտնել:

Զգացում մը՝ որուն վրայ բարեկամ մը կրնար վստահիլ ... բայց ասոր համար ալ մեռնելու էր. վերջապէս այդ ալ բան մըն

էր: Ամենէն կարծրասիրտ վաշխառուն անգամ կը տեսնէիր որ բարեկամ մը մեռնելուն պէս խոշոր սրտակ մը շինել կուտար և կը զրկէր մեռելին տունը:

Ազնիւ չէ՞ ասիկայ և քիչ շատ բանաստեղծական:

Հիւանդանոցին նպաստ ընելը և մեռելի մը ծաղկեփունջ զրկելը երկու տարբեր բաներ են զորս երբէք իրարու հետ չփոխելու չէ:

Պատճառաբանուած գիւտերը չեմ հասկընար:

Հին բարի սովորութիւնները միշտ պահելու ենք: Շրջանաւարտուելիներուն, հարսերուն շատ ծաղիկ տուէք. Հիւանդանոցին ալ ուղածնուդ չափ ստակ:

Բայց, յանուն Աստուծոյ, մի սպասէք որ բարեկամ մը մեռնի՝ Փրկիչին երկու ոսկի տալու համար:

Եթէ այսպէս «փոխան ծաղկեփունջի» զրուծիւնը շարունակէ, մեռելներէն ետքը կարգը հարսերուն պիտի գայ:

Ո՛հ, այն ատեն ...

Հարսեր ալ պիտի գտնուին բնականաբար, որոնք իրենք ալ զթալու համար, աւելորդ պիտի սեպեն այն աւանդական նարնջենիի ծաղկէ փոքրիկ փունջը ունենալ ձեռու ընին, որ այնքան շատ բան կը նշանակէ. կը վախնամ որ հոգեբանական վայրկեանին երբ իրենց հարցնեն.

— Ծաղկեփունջդ ո՞ւր է:

Անոնք հպարտութեամբ վարդագոյն քօրսէին և սեւ շապիկին մէջտեղէն թղթի կտոր մը դուրս չի հանեն, Հիւանդանոցի ընկալաւ գիր մը, և ժպտելով չը պատասխանեն,

— «Փոխան ծաղկեփունջի» ... Chéri.

Ե. ԱԼՓԻՍԻ

ԱՐԵՒԵԼԲ

Օրաթերթ Ազգային, գրական և քաղաքական: — Բաժանորդագրութիւն՝ տարեկան՝ Կ. Պոլսոյ համար 80 դր. գաւառներու համար 108 դր. և օտար երկիրներու համար 35 ֆր.: Հասցէ՝ Ղալաթիա, Գամանսօ փողոց: ԱՐԵՒԵԼԲ հրապարակ կ'ըլլէ ամէն օր, կէս օրին, խնամեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ԻԶՄԻՐԵՍԱՆ ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆ

Ս. ՊԱԼԱՊԱՆԵԱՆ

Առանց վարդապետի հանդէս կըլլայ, առանց դրամի աղքատ մեռել կը թաղուի, առանց հովանոցի կամ դաւաղած թաղական տեսած ենք, կուրծքը քուրջ չի թխած կին կը սպառազի, բայց առանց Սարգիս Պալապանեանի Իզմիրի Աղդ. Առաջնորդարանը. օհ, ան անկարելի է և չըլլալիք . . .

Զինն, կարկոտ, անձրեւ, ջրհեղեղ, սառնամանիք, մեռած կամ ողջ, մեր Առաջնորդարանին ծերունազարդ գիւանապետը պէտք է ամէն օր իր սովորական ուխտաղընացութիւնը կատարէ, Բուքրայի իր բնակարանէն մինչեւ գիւանատուն շնչահատ ու . . . տապանակ ուխտի:

Մանօթ մարդ մը, որ օրուան մարդ է, տարին 365 օր, կիրակին ու տօնի օրերն ալ մէկտեղ հաշուելով՝ շարունակ չը ժպտի, ամէն վայրկեան կը խնդայ, ամէն ատեն կը ծիծաղի, անանկ որ կարծես վարդերու ամսոյն մէջ ծնած է մեր յարգելի գիւանապետը: Այնքան տարիներ, ուր գիւանապետի պաշտօնը կը վարէ՝ այնքան փափկութեամբ ու խոհեմութեամբ, չեմ յիշեր որ մէկու մը սիրտ կոտրած ըլլայ, այլ միայն դառն կսկիծով մը կը յիշէ՝ կոտրելը այն . . . բարչին. զոր իրեն նուէր բերեր է եղբր Ս. քաղաքէն Աբրահամ Այլազեան, սիւղի բարեկամը Յ. Ալփիարին . . .

Ակնոց մը ունի՝ որ թէեւ հրեայէ մը գընած է 10 դրուչի, սակայն անոր դէմքին վրայ հազար ոսկի կարծէ, բաւական է որ անոց զոյգ մը ապակիին ետեւէն հաճի անգամ մը ձեզի նայիլ, և . . . երուսաղէմ չի գացած հանի կըլլաք . . .

Երկայն ճիւղալիքիսի բալթօ մը ունի, որ մէյ մը ձմաւն կը հագնի և մէյ մըն ալ խիստ հանդիսաւոր օրերուն: Իր բալթօին վրայ թերեւս բիծեր գտնուին, բայց իր կէս դարէ աւելի պատկառելի պաշտօնավարութեան մէջ՝ երբէք, երբէք:

Հակառակ իր յառաջացեալ տարիքին՝ որ օրացոյցի հաշուով յառաջիկայ Օգոստոսին ճիշդ եօթնամեակն և իննին պիտի

թեւակոխէ — կենդանի յիշատակարան մըն է: Դեռ երէկուան պէս կը յիշէ այնքան տարիներու մշուշին մէջ կորսուած դէմքերը: Հակառակ եկող գացող տասնեակ մը առաջնորդներու, և չեմ գիտեր որքան ժողովականներու, ինք դեռ կանգուն և հաստատ մնացած է՝ գիւանատան իր մաշած թիկնաթուին վրայ, որուն մէկ ոտքը . . . կոտրած է: Մէկ մը Եգիպտոսի բուրբերը և միւսն ալ Պալապանեանը եղած են ժամանակին քթին խնդացող:

Սարգիս Պալապանեան իր գիւանապետի պաշտօնին շատ բաւական տարիներ գրիչ շարժած է նաեւ լրագրական ասպարէզին մէջ, որու ստորագրութեան վերջին ժամանակներս հազիւ կը հանդիպինք տարին մէկ երկու անգամ, այն ալ օրուան լրագրական կարեւորագոյն խնդրոյ մը առթիւ: Իզմիրի առաջին օրաթերթին «Արշալոյս»-ի — որ կը հրատարակուէր լուսահոգի Պալթազարեանի տնօրինութեան ներքեւ — խմբագրապետը եղած է, զայն հրատարակելով ամբողջ հինգ տարի կանոնաւորապէս: Ու երբեմն Պալապանեանի մօտ գտնուած պահերնուս, երբ մէջերնէս մէկը խօսք բանար օրուան լրագրական կեանքին վրայ, ալ կարծէր ժամերով մտիկ ընել՝ յարգելի գիւանապետին այն զուարթ անէկդոտները խմբագրական ասպարէզին, որոնցմէ մին յիշատակեմ հոս:

Այն միջոցներուն երբ «Արշալոյս» կը սկսի հրատարակուիլ Պալապանեանի խմբագրապետութեան ներքեւ, դրամական շատ մը տագնապալի վիճակներու մէջ կը գտնուի, այնպէս որ թերթին թուղթի ստակն իսկ չի կըրնար վճարել . . .: Թղթավաճառ հրեան մէքիկի մը պէս կերթայ կուգայ տպարան դըրամ պահանջելով, ապա թէ ոչ՝ իր տուած թուղթերը ետ կը պահանջէ: Վերջապէս ալ ճարահատ Պալապանեան, ուրբաթ օրուան համար անպատճառ խօսք կուտայ հրեային, յոյսը դնելով զաւառային գործակալի մը կողմանէ զրկուելիք ութը ոսկիի մէկ գումարին, որ անպատճառ պիտի հասնէր նոյն օրերը, (երանի՛ այն խմբագրապետներուն՝ որոնք զաւառային գործակալներուն խօստումներուն յոյս դնելով՝ գործ կը տեսնեն):

Զերկարենք, վերջապէս գործակալէն խուս

տացուած ապահովագրեալ նամակը կուգայ, ճիշդ ուրբաթ օր այն պահուն՝ երբ հրեան տպարան եկած վերջնականապէս դրամը կը պահանջէ, Պալապանեան անմիջապէս կը ցատկէ նամակին վրայ — որ ամբողջ յոյսն և էութիւնն էր այդ ճգնաժամի պահուն — ու ճառագայթելով կը բանայ նամակը:

Նամակին պարունակութիւնը ինչ կուգէ՞ր որ ըլլայ, փոխանակ ութը ոսկինոց փոխ-գրի մը՝ ութը երեսնոց ահագին ... յօդուած մը: Այլ կրնաք երեւակայել յարգելի խմբագրապետին յուսախաբութիւնը և զայրոյթը, որ անմիջապէս պատառ պատառ կ'ընէ յօդուածը:

Փակելու մօտ յօդուածն, ուրախ ենք ըսելու թէ՝ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, գնահատելով Պալապանեանի անխոնջ և բարւոք ծառայութիւնները, վերջերս օրհնութեան կոնդակ մը զրկած է յարգելի դիւանապետին, իր պաշտօնավարութեան յիսնամեակին առթիւ:

ՄԱՍԻՐՈՒ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

Ե Ի

ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

Զարմանալու բան մը չիկայ, այլ ծիծաղելի իրականութիւն մը՝ նորութիւն մը տուն կուտայ մեզ երկու խօսքով պարզել խնդիրը:

Ամէն տարի Ա.գ.գ. Հիւանդանոցի ընդարձակ օրացոյցէն մէկ մէկ հատ զրկուելով Հանդէսիս անուան, մենք ալ պարտ ու պատշաճը կը տնօրինէինք ծանուցանելով մեր բազմաթիւ ընթերցողաց անոր հրատարակութիւնը և արդիւնքին օգտակարութիւնը՝ ՊԱՐԶ ՓՈԽԱՐԻՆՈՒԹԵԱՄԲ մը:

Այս տարի սակայն խնդիրը կը փոխուի, Գրասենեակին գործոն (.) անդամները, կերելի թէ Հանրագիտակը ԶՐԻՍՊԷՍ վայելելու և կամ զմեզ տղու տեղ դնելու սրամտութեամբ (.) կառավարկեն տարի մը ամբողջ երկու օրինակ Հանրագիտակ յատկացնել ԳՐԱՍԵՆԵԿԻՆ անուան, փոխարէն ՀԱՏ մը Տարեցոյց շնորհելու (.) համար, այսինքն մէկ Տարեցոյցը 100 զրուշի ծախած ըլլալու մոտ:

Տարեցոյցը 10 զրուշ է, որուն եթէ պէտք ունենանք կրնանք գնել, իսկ Հանրագիտակին երկու օրինակը 100 զրուշ:

ՅՈՒՍԱԽԱՐՈՒԹԻՒՆՍ

[ՊԱՏՄՈՒԱԾԻ]

Ամուսնանալու ջերմ փափաքէն մղուած՝ փափաք մը զոր ամէն գիշեր կ'երագէի, ցընորք մը՝ որ բոլոր էութիւնս պատած երազել կուտար ինձ աղւոր, թօմպուլիկ ընկերուհի մ'ունենալ, որ կարենար ինձ խնամել՝ հեթուհեցայ եղած ժամանակս կռնակս չփէր alcohol camphreով, ձմեռ գիշերներ տաքցնէր զիս փոխանակ աղտոտ փոսիկին, վերջապէս կատարէր շատ մը պաշտօններ ևլն.:

Այլսարհի վրայ արդէն ո՞վ չ'երազեր ամուսնութիւնը, բացի սնոնցմէ՝ որոնք ամուսնացած և անոր լեղի համը առած են:

Տան դրացի, ջատուկ կնիկներ, բարեկամներ, աղգականներ իմացած ըլլալով այս ապուշ ! փափաքս, բոլորն ալ իրար սնցած սկսան փնտռել ինձ համար աղջիկ մը, իբրեւ թէ ես ծառանիդ անտեղեակ ըլլայի կանանց աշխարհին և չկարենայի գտնել ինձի ետեւմիտ ըլլալիք որսը: Մին իր տունը մնացած քուրճիկութեան թեկնածու աղջիկը կ'ուզէր առաջ քշել, կռահելով գուցէ թէ՝ ես այս տարիքիս մէջ հիւանդապահուհիի մը պէտք ունիմ, միւսը իր աղջիկը կ'առաջարկէր, ուրիշ մը իր թոռը, բայց ես ամէնուն հանդէպ ալ անդրդուելի կը մնայի, անպատասխանի ձգելով հազիւ իթափի ելած այդ խլավուդները:

* * *

Օր մը անուշավաճառի մը խանութը նրստած հաշիւ կ'ընէի թէ՝ հիմա քանի տարեկան եղած կ'ըլլամ, քանի որ ես տաքսիս, պալմեախն և բաթլինգներն ամուսն ծնած եմ, երբ յանկարծ կը տեսնեմ որ գանգուր մաղերով, սեւ աչքերով և կարմիր այտերով՝ կոյս ըստմ թէ աղջիկ, կուգայ բազմիկ ճիշդ դիմացս: Իր անուշ նայուածքը խկոյն շանթահարեց զիս (առաջուրէն քովս շանթարգել մ'առնելու մոռցած էի), անպատմելի ջերմէ մը բռնուեցայ, ջերմ մը՝ որ եթէ քիչ մը եւս չարունակուէր ապահովաբար հիմա sièvre tiphoides պառկած պիտի ըլլալայի: Նայուածքներու փոխանակում մը սկսաւ մեր մէջ, խոտոր, ուղիղ, զուգահեռական, չեղ, ութ-

անկիւն (երկրաչափութիւն չգիտցողները թո՛ղ սորվին), որոնք աւելի կը հրահրէին մեր կրակ առնելու վրայ եղող սէրը: Մեկնելու ժամանակը եկաւ հասաւ, անդուժը իբրեւ վերջին յարգանք՝ փոքրիկ ժպիտ մ'ուզելեց ինձ, ահաա երու ցոյց մը՝ որ ամբողջ էութիւնս տակն ու վրայ ըրաւ, որոշեցի չ'երթալ, սակայն մոռցած էի նաեւ հետս բերել եօրկան skotchկ մը հոն գիշերելու համար:

Վերջապէս կէս մնացած սիրոյս փափաքը փորս պահած ճամբայ ելլելու վրայ էի՝ երբ անուշալաճառին փոքրիկ աշկերտը դէպի ինձ կուգար, երկսող մ'էր բերածը. բացի իսկոյն՝ և ի՛նչ կարդամ, օրիորդին կողմէն rendez-vous մը միւս օրուն համար, զոր կը վերջացնէր «եթէ չգաս կը բարկանամ, քուկդ Շուշան ետէրպագանան» ու, բարկանալ, ո՛հ քնաւ երբեք, քանի որ նպարալաճառի մը խանութը չէինք գտնուէր քիչ մը քացախ հասոյնելու համար:

Միւս օրը որոշեալ ժամուն դայի անուշալաճառին խանութը որ ինձ կ'ըսպասէր սիրունիս !: Յարգալի՛ր կերպով մը զայն բարեկէս յետոյ՝ գացի նստայ քովիկը: Տաք խօսակցութեան մը բռնուած էինք երբ հուրիս զիս «հոգի՛ս, պաշտելի՛ս» սոճականութիւնով կը մկրտէր, առանց սակայն աւաղան խոթելու:

Բաւական ամիսներ տեւեց մեր այս սիրոյ կատակերգութիւնը, և օր մ'ալ ալ եւս քիչ մը յանդուգն գտնուելով՝ համբոյր մ'ուղեցի սոխակէս, որ չլլացաւ ... ու մէկին տեղ երկու շնորհեց, այն հաստատ մտքով թէ՛ ինք բնաւ սեւմիէէն վնաս մը չսկիտի ընէր: Համբոյրին մասին ցոյց տուած բարեացակամութենէն չփառած՝ օր մ'ալ խնդրեցի իրմէ՝ որ եթէ կարելի է ալ աւելի համարձակութիւն մը շնորհէ ինձի, սակայն այս անգամ մերժեց չար սիրտը, ըսելով «մինչեւ որ մեծ ԱՅՈ՛ն չարտասանենք՝ արգելուած է ձեզ»: Մեծ այո՞ն, և արդէն իմ փափաքածս ալ ատ էր:

Վերջապէս որոշեցինք ամուսնանալ: Երկուշաբթի օր մ'էր լաւ կը յիշեմ, երբ մեզ առաջնորդեցին եկեղեցի, տէրտէրը շատ մը քաներ կարդաց, որով կը հաստատէր թէ՛ ասկից վերջը լիաւջ տէրը կ'ըլլայի այն է-

սկին, որուն վրայ մատ դպցնելը անգամ արգելուած էր ասկէ առաջ: Սրբազանը ժամ մը ձիշդ արդուկեց գլուխնիս, վեր հանելով մեր բարեմասնութիւնները, որոնք չեմ գիտեր թէ երազի՞ն մէջ լսած կամ տեսած էր:

Եկեղեցիէն Սբաւնտիտ (ըստ սովորութեան) հոն կեր ու խում, շամբանեայ, բասթա, և ին. և անկից կառքերով դէպ ի տուն: Գիշերը վրայ հասած ըլլալով՝ ժամանակն ալ եկած էր մեր այսպիսի տքնութեան արդիւնքը վաշկելու, ուստի մեզ առաջնորդեցին խիստ լաւ կահաւորուած սենեակ մը ... որուն առաջաստի սենեակ անուանուիլը ի հարկէ դուք ալ գիտէք: Բունտ տագնապի մը մատնուած էի, բայց մի՛ զարմանաք երբ ըսեմ թէ՛ կինս բոլորովին անտարբեր էր: Միւս առաւօտ արթնցանք, հարսին մայրը դիմաւորեց զիս և շնորհաւորեց:

Շատ օրեր անցան և ես դեռ կնոջս մազի՛ն անգամ չէի դպած, գուցէ մըտածէք թէ քենիիս հետ ամուսնանալու մըտք, բայց եկէք տեսէք որ քենի ալ չկար մէջտեղ: Գիշեր մը տունը տակնուվրայ եղած էր, ի՛նչ կար, կնոջս սանձին բռնած էր, բժիշկը հաստատեց թէ քանի մ'օրէն նոր էակի մը ծնունդ պիտի տար կինս ...: Արմանքս, զարմանքս մեծ եղաւ, մէկ քանի օր վերջ առանձին տեղ մը կանչելով կինս՝ խնդրեցի թէ ո՛վ էր այդ էակին հայրը, խոստովանեցաւ անպիտանը առանց խպնելու, թէ ամուսնութենէն քանի մը ամիս առաջ իր նարնջաճաղիկները փետտած էր Գարեգին աղա մը, որ մինչեւ մեր ամուսնութեան օրը իբրեւ հօրաքեռորդի ներկայացուցած էին ինձի:

Այն ատեն միայն հասկեցայ թէ՛ Շուշան ամուսնացած էր ինձ հետ լոկ իր պատիւը պաշտպանելու համար: Ի՛նչ յուսախաբուութիւն:

Բերա

ՎԻՕԼԷԹ





ՏԻԿ. ՉԱՊԵՆ ՀԵՔԻՄԵԱՆԻ
Ի ՊԱՏԻԻ

ԲԵՐԱ ԹԱՏՐՈՆ ՎԱՐԻԷԹԷ

ՇԱՐԱԹ գիշեր 7 Ապրիլ 1907, Ժամը 3 ին (Ը. Թ.)

ՕՍՄԱՆԵԱՆ ՏՐԱՄԱԹԻՔ ՆՈՐ ԽՈՒՄՔԻՆ ԿՈՂՄԷ

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՆԵՐԿԱՅԱՆԱԼԻ

ՄՕՐ ԴԱՄՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Տրամ 5 արար

ԾԻԾԱՂԱՇԱՐԺ ԶԱԻԵՇՏ ՄԷԿ ԱՐԱՐ

ԹԱՂԻ ՄԸ ՕՐԻՈՐԴԸ (*)

[Պ Ա Տ Կ Ե Ր]

Կունստ ու կլոյ մտէ՝ անհամ զանգուած մը։ Առաջին անգամ տեսնելուդ՝ բերնիդ ջուրերը կը վազէ, բայց չուտով ալ կը ցամփի . . . :

Դանդաղ, անհրապոյր, մենաստանի մը կոյսերու մատափալար մը, աւելի մայրապետ ըլլալու տրամադիր՝ քան սիրուելու հակամէտ . . . :

Դիւրաթեկութիւն, իգականի հրապոյրի ցուցադրում, շնորհալի շարժումներ, դեղեցիկ քալումներ, նազելի փափկութիւն, սիրային հրապրքոտ խօսքեր, փափկուն ժպտաներ, երբէք մի վնասէք անոր քով։ Աշքառու արցան մը, անկէ անդին ոչինչ։

Անոր վրայ միայն հիացում մ'ունիս ներսը, բայց գրգռում երբէք։

Ձանոնք զիտողը այնպէս կը կարծէ թէ, սիրտ մը որ ներքուստ միայն կը միայն . . . : Ոչ միտում, ոչ այրում կայ հոն։ Ամբողջ անտարբերութեան ու անհոգութեան տիպար մը ներսով դրսով . . . :

Բացի կիրակի օրերէ, լուր օրերը երբ տեսնես պատահաբար զըզլիակներու պատահատուն ծրար մը պիտի կարծես զանոնք . . . :

Գիշերները լուռ ու մունջ կանուխ անկողինին կը մանեն, առաւօսները շատ ուշ կ'արթնան։ Հանգիստ ու խաղաղ մրտի մը, առանց տուայտելու հիւժող մղձաւանջներէ, որպէս կը չարչրկին Բերացի օրիորդները . . . :

Ամենէն սիրելի աշխատութիւն, — ձեռագործ, առանին աշխատութիւն, քիչ մ'ալ բամբասանք, որ կնոջ շուրջ կը դառնայ քան էրիկմարդոց։ Առհասարակ Բերացիներուն բամբասանքին համը չիկայ հոն որ այրերուն շուրջը կը դառնայ . . . :

Կնոջ մը բամբասանքին համեղութիւնը այս վերջինին շուրջը դառնալը աւելի բնական չափով ըլլար միթէ . . . :

Այդ թաղին օրիորդը երիտասարդներէ կը խորշի, չը գիտեր, երբ դու զայն կը դիտես։ Չը խօսիր, երբ դուն հոն ներկայ ես։ Չը ժպտիր, երբ դուն անոր կը ժպտիս . . . :

(*) Թաղը վերապահութեամբ։

Ափեղցիկը հոգեբանութիւն մը, կնոջական հոգեբանական մատենաներուն մէջ թերեւս յաւելեալ exception մը . . . :

Բերացիներուն վրայ լաւ չի խօսիր, հաշկարութիւն մը ցոյց կուտայ երբ անոնց խօսքը բանաս։ Կը հիանայ անոնց վրայ, բայց չի յարգեր, կը տենջայ անոնց նմանիլ, բայց չի կրնար, կը ձայն անոնց հոլանի շարժումներունհա, բայց ծնողական բռնութիւնը զինք կ'արգիլէ։

Այդ թաղին օրիորդը դուրս չելլէր, ծոյլ է, ոչ հիւր կերթայ, ոչ հիւրէ կախորժի։ Տարին երկու անգամ միտքը կ'իյնայ, ինքզինքը ցուցնելու ազնիւ իղծը, մէյմը Ծնունդին՝ եթէ օդը նպաստաւոր ըլլայ, ու մէյմալ Աւալ-Հինգշաբթիի նուիրական օրերը։ Ոչ խարի պէս միամիտ։ Հեռուն երթալու կը դժկամայի, եթէ այդ սրբազան օրերը Ս. Յովնանէս եկեղեցին երթաս, հոն կը տեսնես իրեն ծոնդացը հետ միասին, ջերմ հաւատքով լեցուած։

Ամէն օր մեծ պարհք կը բռնէ, ու երկար օրերը իրեն մեղքերովը կը տառապի թերեւս։ Կիներուն կերած կերակուրը միօրինակ է, բերան-խոխ ընելու սովորութիւնը տակաւին հոս մուտ գտած չէ . . . :

Դանդաղ մարմնով՝ դանդաղ ամուսնութիւն . . . :

Տունը մնալու սովորութիւնը . . . ամբողջ ուղուսուղութիւն մ'եղած է իրեն գլխուն, տունը փասնալ . . . ինչ անտանելի բան։

Հոս մարտա ապրանքներու սթօք մը կայ։ Ամենէն տգեղ մարդը, ամենէն գեղեցիկը կերելի անոնց աչքին, և ամենէն աղքատը չափազանց հարուստ։

Ձեռք մը հագուստ ու քառասուն ոսկի դրամագլուխ կամ լուցկիի տուփի մը չափ խանութ մը, բաւ է հոստեղէն աղջիկ առնելու, գրաւ կը դնեմ, յաջողութիւնը անվերէպ է, չէմի՞ որ դիմացի ամուսնացողը էրիկմարդ պիտի ըլլայ, բնութեան պահանջքը անկէ կը բղխի արդէն . . . :

Չը հաւնուելիք մաքան չիկայ հոս . . . :

Ուսումնական, ժիք, ոչ իսկ սալօնի երիտասարդի հետապնդում, կը բաւէ որ չար նաչար ի վիճակի ըլլաս կնիկ նայելու, անկէ անդին ոչ մէկ բանի ահանջ կը կախեն . . . :

Հոս երբ աղջիկ մը նշանուի, ամբողջ
թաղը կ'իմանայ, ալ պէտք չգացուիր լրա-
գիրներու ազդարարագիր ուղղելու:

Մեծ բախտաւորութիւն: Անունի անեղ
հռչակում երբ հոս կը նշանուիս, հակառակ
երկու տող գիր գրել չգիտնալուդ, սանկ
ուսումնական է, նանկ գիտնական է:

Հոս երբէք հրդեհ ելած չէ:

Ապահովագրական ընկերութիւնները միշտ
չահաւոր ելած են:

Սիրոյ հրդեհը մինչեւ այսօր տակաւին
ծայր չէ տուեր, աղջիկներու արդարացի
հրայրքոտ տենջը կրակ առած չէ որ հրդեհի
մը սկզբնաւորութեան պատճառ ըլլայ . . .:

Տարօրինակութիւն մը կայ այս օրիորդին
հոգեբանութեանը մէջ: Անդգայ եթէ ըսեմ,
բնութեան օրէնքին դէմ մեղանշած պիտի
ըլլամ:

Հապա ի՞նչ . . .:

Լոկ տարասեռի բնազդը ունի, բայց ճա-
շակի ընտրութեան յարմարութիւն . . . եր-
բէք:

Մտային զարգացումը, որ գրականու-
թեամբ կ'ըլլայ, ամենեւին մի փնտռէք անոր
քով: Մասեօններու վարժարանէն երկու
բառ գաղտնիքէն, երկու լպտուկ նօթեր դաշ-
նակի վրայ, երկու երեք կտոր ալ դարձ-
դարձիկ պարեր, անկէ դուրս ոչինչ գիտէ:

Հայերէն երբէք չգիտեր, ընտանեկան
չըջանակի մէջ եթէ բուն հայերէնը խօսիլ
սկսիս, երեսդ կը նայի ապշահար թէ հայե-
րէն է խօսածդ չէնէ չինարէն:

Աւելորդաբանութենէ չախորժիր, քա-
նի որ ճշմարտութիւնն է որ կը պարզեմ:

Շատ ամուսնացող զարգացեալ երիտա-
սարդներ, այնպէս կը կարծեն թէ՝ այս աղ-
ջիկը լեցուն դրամօժիտ ունի, Համով հոտով
կտորի մը պէս կլլելու ախորժակը կ'ունենան,
բայց համը պատրանք . . .:

Հոստեղի դրամօժիտը չքեղ կարասիները
կը կաղմեն միայն:

Ահա լուսանկարը, ահա հոգեբանութիւնը
իւր ճշմարիտ փուլերուն մէջ:

Ա. ԳԱՐՈՒՃԵԱՆ

Էրստ ՍԻՐՏԷ... ՆԱՍԱՀԱՅ

Ախնիկ մը ունիմ, անունն է Զարուկ՝
Թամ Բամ մեմայ, եեք էլլայ վարուկ:
Էրկան սեւ մագեր՝ իվիներ խալեմ,
Պոյին րսես նե, հայրան է ալեմ:
Խումրիի պերան՝ փրագէ տուախ.
Ամեն տեսողներ՝ կ'ընեն մեյմեկ ա'խ
Կերանը խայմախ, վրան բոզ թեքե,
Վուճուք ֆրսքիս, հեմ քահա ինչեր . . .:
Պերանը մեմ է, ի՞նչ մեխկրս պահեմ:
Ֆախաք չը մոռնամ, աւելերն է պահեմ:
Քիչ մըն ալ լեզուն՝ քեքէյէ աւա՝
Ինձի կրքաբար կը կանչէ «մամա»
Թեմպէյ չը կիսնաս կրակ կըրմանի
Թեվերը սանկ մը սօքսեմէ Խանի՝
Խանի պէս տուն մը պիլի բլլայ նե՝
Կը քեմուզցունէ կըրոխ կը հանէ:
Ծառք զեմահա՞ք. — Տիվալ կը պանի
Քերկեֆին քակն ալ կը կանչէ մանի:

×

Հասըլը ասանկ ախնիկս անըման,
Հիչ էլ ալեմին չընելով տեսան,
Պարեկեցեցանին շաբաք իրիկուն՝
Խըլլիս մըսծուցի քարի Օսիուն,
Քի սանկ շեմ շընոք՝ էլի աղընա
Նեքիթի փեսայ, մը կըսնամք հունա:

×

Թամ կես գիշերուան սահաքը վեցին
Նեք պանսաները բոլան չալեցին
Միւսիւ մը խըլլախ հագուած, կեօղիւկով
Ուտուով եկաւ մախսըմիկիս ֆով,
Էս ալ սեվիմենա աւ ֆերքեն հեմեն
Աւելես անդին քարուցի տեմեն,
Քա խենք էմ ի՞նչ էմ ինչեր կը նախեմ
Կեցիր ֆա Եավուլմ ֆեմանը զուրցեմ
Պալօ, սուվառէ քեմիլ պօք կընաց
Զարուկս կեմէ աւ քարի մընաց,
Իքեք իմ սիրս ալ արունով լեցուն
Նասիհաք կուսամ մեր ախնիկներուն,
Ախնիկներ էյեր կուզէք նե էրիկ
Ձեր քապուսովը քեք դուք տիքիկ:

ՄԻՕՋՈՒԻՍ

Փ Ե Ս Ի Ն Օ Ժ Ի Տ Ը

[ՆՈՐԱՆՈՐ ՅՕԴՈՒԱԾ]

Ամէն մարդ որ կը ծնի, կոչուած չէ Ռօք-
ֆէլլը մը և կամ Ռօչիտ մը հոշակուելու,
որ նստած տնոյը ժամացոյցին ճոճանակին մէն
մի շարժումը իր գրպանը բերէ նետէ հարիւ-
րաւոր հազարաւոր ֆրանքներ: Ամէն մարդ
կը ծնի հացը ճակտին քրտինքովը շահելու
համար, ասիկայ մեր գտումը չէ, այլ Աստ-
ուածային որոշում մը, սկսեալ մեր նախա-
հայրէն:

Առաւօտները հաճոյքը կ'ունենամ դիտե-
լու կամուրջին վրայ, այն փութկոտ երթե-
ւեկը Էսնաֆ դասակարգին, որոնք ժամ ա-
ռաջ հացին դուռը բանալու կը շտապեն, ա-
մէն օր ... , այո՛ւ ամէն օր:

Մասնաւորելով մեր խօսքը, նիւթը կ'ու-
զենք կ'եղբորնացնել Մեծ-շուկային վրայ,
ուրկէ կ'ապրուին հազարաւոր ընտանիքի տէ-
րեր, տեսակ տեսակ գործերով, զբաղումնե-
րով:

Կը ցաւիմ, կը խղճամ, այդ մարդոցը վը-
րայ, երբ կը տեսնեմ թէ անոնք օրն ի բուն
կը տանջուին կին յաճախորդներու երեսն:

Հաւատացէ՛ք, եթէ օր մը խանութպան
ըլլամ, խանութին վրայ փոխանակ առնեա
գնելու՝ սա տողերը կը գրեմ մեծագիր «Կի-
նԵՐՈՒ ՀԵՏ ԱՌՈՒՏՈՒՐ ԶԸԼԼՈՒՐ ՀՈՍ»:

Ֆեմինիստներ կրակ պիտի կարին եղէր...
հոգս, անոնց երեսէն ես մոխիր դառնալուս,
իմ պատճառաւ թող կրակ կարէն:

Ամէն ամէն ասեմ ձեզ, ան որ 60 սան-
թիմ կուրծք մը, և մէկ ու կէս քաշնոց սիրտ
մը չունի ... չի կրնար շուկան խանութպան
ըլլալ:

Երեւակայեցէ՛ք չորս հինգ կիներ, ամէն
ժամ, ամէն վայրկեան խանութին մէջ, ան-
դադրում խօսակցութիւն, հարիւրաւոր ապ-
րանքներու տեսակը թէզկետին վրայ թա-
փել կուտան, կը չափեն, կը ձեւեն, չիտալը,
քեւսը կը գնին, կը քննեն, ուղղուած գինին
քառորդը կուտան նախ, յետոյ ամէն մէկ

դուրս ելլալ ներս մտնալնուն տասը փարայ
կ'աւելցնեն, և սակայն ... բոժոժը կրկին
խանութպանն է որ վզերնին կ'անցնէ: Օ՛հ
ըլլալ ... :

Այս ճշմարիտ տողերը գրելուս առթիւ,
ձեզի ժամանցի համար նկարագրեմ ընտանիք
մը, որոնք անցեալ շաբթու շուկան, ՀԵՐ-
ՃԱՅԻ ապառիկի վաճառատունը դիմելով...
փեսերնուն և հարսին սենեկին համար յար-
մար գոյքեր և հանդերձներ գնեցին:

Մինչեւ հիմա գիտէինք որ, երիտասարդ
մը մինչեւ որ կին մը ապրեցնելու վիճակ մը
չունենայ՝ չի կրնար ամուսնանալ, բայց ժա-
մանակէ մը ի վեր կը տեսնուի որ — և ապ-
ալ չնորիւ տունը մնացած աղջիկներու շա-
տութեան — մայրեր իրենց աղջիկը կուտան
ա՛ն երիտասարդին որ կրնայ աղջիկ մը սի-
րաւահել:

Ասանկ ըլլալու էր ... :

* * *

Առաւօտ է: Ոսկերչաց շուկային մէկ ծայ-
րէն միւսը սուրճ ֆոթելու շշուկ մըն է կ'անց-
նի, ամենուն ձեռքը սուրճ, բան մը՝ որ սո-
վորութիւն եղած է ալ, խանութինն բանալ-
նէն անմիջապէս վերջ տանլլոյ սուրճ մը կը
ֆոթէն, բայց երբէք չեն հասկնար ֆլութէն:

Աղջիկը գէթ «Նշանաւ»ով վերջնել չտա-
լու համար պսակելու մարմաջին գոհացում
տուող միամիտ մայր մը, իր եռեսուն քաշ-
նոց մեղքին, ինչպէս նաեւ միմիայն երիտա-
սարդութեանը և կայտառ կազմին ապաւի-
նող երիտասարդի մը հետ երեք մէկ շուկայ
հասնելնուն կսկսին աջ ու ձախ ձգել իրենց
ապուշ ակնարկները:

— Քա ճանըմ ճէրահին խանութը ըսին
ինչ խալթ կ'երան, սատանին որ ծակուելին
է քի չեմ տեսնար կոր կ'ըսէ կինը, նէֆթի
ֆիտաանին բէշերը երկու կողմէն վեր սոթ-
թած:

— Էյ աման տուտուս, տասն անգամ

շտկեցի, կէնէ եաղլը կը զուրցես կոր ... ,
ճէրահ չէ՝ Հէրճայի՛, Հէրճայի՛ ... , կը պա-
տասխանէ օրիորդը, որ երիտասարդին քովն
ի վեր կը քալէր ... :

— Ի՞նչ է նէ իշտէ, ի՞նչ գիտնամ, գոր-
ծերնիս տեսնա՞յ տէ, կուզէ ճէրահ ըլլայ,
կուզէ լավութիւն ...

Խանութի մը առջեւ կեցող մէկը իրենց
մօտենալով,

— Ի՞նչ է ան քուրուկս, մենք ալ ու-
նինք հէմ աղէկը ունինք, մէյ մը ներս հը-
րամմեցէք ...

— Չէ եւս լրում, էլ մասի տայիր բան առ-
նելու չենք, կրնինք ունի թիւեալս խաղէթա-
յին մոռ խափախին վրայ կիր մը կարդացինք
քիմ, վէրէսիյէ ամենական բանը ծախող խա-
նութ մը կայ եղէր հոստեղս, իշտէ ատիկակ
որ սահաթէ կը փնտռենք կոր, լեզունիս ա-
վի շունի պէս դուրս ինկաւ ...

— Հասկցայ, Հէրճային կ'ուզէք կոր ...
նա սա հեռուն նայէ՞ ... Խանութիս վրայ
խոշոր չիլէկ մը կա՞յ եւ, իշտէ ատ մաղա-
զան է ...

— Վո՛ւյ ապրիս, Աստուած կընիկդ չի-
րին երեւցունէ աշկիդ որդտի ... Ըսելով՝
չիտակ հող կ'ուղղուին ու երեքը մէկ ներս
կը մանեն խանութէն:

— Բարիլուս ձեզ որդտի ... աչքերնիդ
կը պաղէ՞ր կոր ...

— Ասծուբարին մարիկ, մինակ աչքերնիս
չէ, աս հաւլային չորսդինիս տունիւ կ'ըլլայ
կոր զաթը, կ'ըսէ խանութպանը, մէկ նայե-
լուն կուսնելով թէ ի՞նչ աստիճանի յաճա-
խորդներ են դիմողները:

— Իշտէ ես ալ Աստուծոյ հրամանովը
ճահիլները չը մսին տէյի կը կարգեմ կոր ...
աղջիկս է, ան քովինն ալ նշանածը ...

— Խերերնին տեսնաս ... Ըսել է քի
Միւսիւն է մասի տայիր հէտիյէ մը պիտի
առնէ տէ, ուղածնիդ ըլլայ տէյի հետը բե-
րեր է ձեզի ...

— Ատ սողաւորի պան է, հիմաճուկ էս
առաջ, իմացածս դուք ամենական պաները
կը ծախէք եղէր, փեսայ ըսածդ զաւակ ըսել
է, սա Գաբիկիս վեց հատ վարտիք կ'ուզեմ ...

—

Աստուանց կանուխ ապառիկի վաճառա-

տունը դիմող յաճախորդներուն, առաջին
սիֆթանը վարտիքէն սկսելուն առթիւ խա-
նութին մէջ դառնուողները բոլորը մէկ իրա-
րու երես կը նային:

— Հասկցայ քի խօշաֆնուդ դնաց ամա,
ինտոր քի ըսի նէ, փեսայ ըսելը զաւակ ը-
սել է, ինքն ալ մարդ մարդասանք չունի,
տիպը վրան ես պիտի ընեմ ըլլամ ...

— Հիմա մարիկս, ատ ուղածդ ետքէն
ուշաուրմիշ կընենք, պաշխա ի՞նչ պիտի առ-
նէք ...

— Հա, կէնիշ քառեօլա մը, երեք հաս
երեսն խալլու, կէճէլիկիս չիֆթ մը խափ-
ֆէ տէ վրան սիւղէնիլի բանթուֆլա, ան
կուստօէն ալ կլխուն թառօշ մը, սա ուր է
դիտնս, սրաւարտի սըրմա ցէօրէն պանուած
կ'ըլլայ ...

— Է՛յ ... ամէնը մէկ ըսէ քի լիտան
չինենք տուտու, կ'ըսէ խանութպանը, իւ-
ղոտ յաճախորդները ծաղրել ուղկով:

— Վրայի լաթ ալ ունի՞ք ...

— Հապա աղէկը և ընտիրը ունինք ...

— Ատ ընտիր ըսածդ սուղ պան է, չեւ-
լայ ըռէնիդ նետէ ...

— Չէ ճանըմ, խաա մ'ալ խաա ...

— Է՛յ անանկ է նէ տայանըլը թէք ը-
ռէնկ լաթեր ալ կ'ուզենք, ամա սանկ քիմ
պատանքի պէս կ'ունկին փակի ...

— Մենք կը փակցունենք տուտու, դուն
հող մընէր, — երիտասարդին դառնալով —
ի՞նչ պիչիմ կ'ուզէք միւսիւ ...

— Չեմ դիտեր, ըստ իմ կարծեաց հանդ-
րիճումին, կամ ըստ պատշաճութեան օրի-
նաց, փափաքէի էր որ քօսթիւմս, կրեր
այն ազնիւ գոյները, որոնց ...

— Արեւդ սիրեմ պիւլպիւլս, ատ լեզու-
ները կը թափես կոր ամա, չորնամ, նայինք
կը հասկնան կոր ... կ'ըսէ զոքանչ հանրմը
փեսի, երեսն ի վեր հալ ու մաշ ձուեր առ-
նելով:

— Դուն մէռաք մընէր մարիկս, մենք
հասկցանք միտք բանին, ղէրէ միւսիւն պէս
չառերը կուգան հոս տէ եկածնուն պէս կը
դառնան ...

— Է՛յ հէլպէթ, վէրէսիէ ըլլալուն կիպի,
առը խովանիի պէս կը պանի խանութնիդ,
Ասծուծու աշկին մեռնիմ, Ֆուլիկճանըս նը-

չանեցի չինչանեցի՝ կիտես քի ամենական պանըս խօսայցաւ ...

— Հիմա ինծի նայէ միւսիւ, ուրիշ ինչերու պէտք ունիս նէ ըսէ, նայէ տալեանի պէս զոքանչ հանըմըդ մէռմէոի պէս կեցեր է, դուն ուզածդ ըսէ տէ մենք ալ լիսթան անցունենք ...

— Ըսէ՛ եավրում ըսէ՛, չորսպնիրդ ալ աս առտու նայեցայ քի խալսուր էր դարձէր ...

— Այո՛, գուպաներուս համար շատ հոգ չեմ տանիր տիկին մայր, որովհետեւ Մեծն Սոկրատ առանց գուպայի կը պարտէր ...

— Անոր մարը կարողութիւն չունի եղէր տէ ան է եավրուս, ելլաս պաղիս նէ ետքը ... դուն ինծի նայէ եավրում, վեց չիֆթ ալ չորսպ գրէ ...

— Լաւ, ուրիշ ... կըսեն հոն գտնուողները, հազիւ խնդուքնին զսպելով, աս ամէն բաները միւսիւն կառնես կոր, օրիորդի՛ն, ինչ պիտի առնես ...

— Անոր ճէհէզը տասը տարի է հազըր է եավրում, բաղնիքին թասը պիւէ ըշը ըշը խալային եմ տուէր, գործը, փեսաս կոկեւն է ... երեւուն միտնիմ, նայէ խուզի կըլմանի, պերնուլը պան մը կուզէ՞ կոր ...

— Խերը տեսնաս մարիկս, ֆախաթ չիյտեմ քի աս միւսիւն կիզի սըթմա քաշեր է՞ աճապ ...

— Վո՛ւյ ... վրան բարի, բունկալի հաւկիթ կըլմանի, անարատ է, անարատ ...

— Մենք ալ անանկ թահմին ըրինք ... չիտակ է ... էյ ուրիշ ...

— Հա նայէ քի մընաց կը մոռնայինք կոր, սանկ առտուն էրիկ կընիկ ելլան տէ օտանին նստին Թէ, եավրուս օմուզներուն բան մը չուզի՞ր ...

— Այո՛, ոսպ տը չամպուր ...

— Ձէ ճանըմ, մուշամպան կը պաղեցունէ ... պաշխա՞ ...

— Մուշամպա չէ մարիկս, եունլու, երկայն, մէջը քարիթօնէլի ...

— Ձեմ հասկընար կոր քի ...

— Մէջը լօխումլու, լօխումլո՛ւ ...

— Էյ թէզ կը պայաթնայ, մեղքը չէ քի հիմաճուկուընէ առնենք, անոնք ուզին նէ, ետքէն կէս կէս օխա թող առնեն ...

— Հասկցայ քուրուկ, ցերեկը կերակուրէն ետքը հրամմելու էիք քի, իրար հասկընայինք, առտուանցով տահա գլուխնիս տեղը չէ ...

— Ի՞նչ գիտնամ ճանըմ, լօխումլու կ'ըսես նէ, ի՞նչ ըսել կ'ուզես կոր ...

— Առաջ կարճ խօսքով ըսէ քի, աղջիկս կը կարգեմ կոր ամա, փեսիս ճէհէզն ալ ես պիտի ընեմ, փարայիս կէօրէ վրան գլուխը չինեցէք տէյի ...

— Քա հա՛ իշտէ, որ սահաթ է աս պիտի ըսեմ, քա ճանըմ իս մտիկ ըրէ եավրում, աս ճահիլը որ վախիթէն պէրի աղջկանս ետին է ինկեր, ամէն գիշեր կուգայ քիմէսին տիպը կըս կըտ կըտ կըտ ծան կուտայ, աղջիկս ալ թօյ (°) կեղան երկուքն ալ կը խօրաթուրն կոր, ամա կէշ միտքի՞ ... մեղայ Տեառն ... ամառը զարար չունէր ամա, ճմեռը չեղան մսին հիւընտնան տէյի, չար նաչար ըսի քի կլոխ կլիտու տամ յսակեմ տէյի ... իշտէ սըռըս պայի, ասկէ անդին բան մը չունիմ ըսելիք ...

— Աղէկ եա տուտուս, փեսայ ըսածդ, իրեն պէտք եղածները ինք պէտքը չէ՞ քի ընէ ըլլայ, դուն ինչո՞ւ կը չինես կոր ...

— Եաղմա չիգայ ... ես սէրսէմ չեմ ... հա՛ ... մէջերնիս անանկ խալիլ ըրինք քի, բանի գործի ըլլալուն կիպի, ըրած մասրաֆներս պիտի տայ ... հէմ ալ աս խալիլը սաղլամ ըլլայ տէյի, օտաս էրկանս պարկենքը կայ, անոր ետեւին մուխավային վրայ իր ծառքովը գրած է քի ... էրիկս ալ չահիտ ըսել է ...

— Էյ աֆէրիմ մարիկս, ատ աղէկ մտմը տացեր ես ... տահա աղապ աղջիկ ունի՞ս ... կը հարցընեն քրքիչներնին զսպելով ...

— Ա՛խ ուր էր քի ունենայի ... իմ քովըս մա՛լ կը մնար աճապ, մէկիկ մէկիկ հարս կընէի տէ թոռներուս վրայ կը նայէի քէֆս կը քշէի ...

— Ատ չիտակ է, ասանկ փեսաները տիպով վրայով կոկես նէ, մէկ կարգուողը մէյ մըն ալ միւշտէրի կեղայ ...

— Հիմա կեցիր նայիմ զիհնս թօի ընեմ, տահա ի՞նչ պիտի առնէինք, դուն ալ ըսէ տղաս, ուզածդ ի՞նչ է նէ ըսէ տէ լիստան անցունենք ...

— Տիկին մայր, որպէս զի ձեր կամքը ըլլայ, քանի որ կուզէք գիտնալ թէ՛ ի՞նչեւրու պէտք ունիմ նախապէս, կրնամ ձեզ մի առ մի թուել զանոնք, եթէ պատշաճութիւնը և կենցաղագիտութիւնը ներէր զայդ...

— Քա ետվրում, առ ըսածներուդ մէջը ֆանթազիէ պաներ կայ ինծի կուգայ քի, էկէր խապիլ է նէ ետքէն առնէիր... հիմակու հիմա տակդ վրատ կոկիւնք տէ ետքէն առ շարածներդ խօսայ է...

— Մարիկա, միւսին պէտք ունեցածները չըսեր կոր, ճառ կը կարդայ կոր ճառ... մինք ալ ըսես նէ ամէն բան կը ծախենք ամա, մուխավա բարենիչ չունինք քի հանենք տանք... հիմա ինչ քի պիտի առնէք նէ թէզ ըրէք, ուրիշ գործ ունինք...

— Ետվրում, զաւակս, կարդալ գրելը հաթիւմ պիթիւմ է...

— Կերեւայ կոր քի անանկ է, երդում մընէր... զաթը անանկ չըլլար նէ ինքզինքը բամպակի չուվալի պէս վրադ չէր ձգեր...

— Հիմաճուկ նայէ կէնէ շաշըմիշ ըրի, վեց հատ մեղաց տոպրակ, ծառք մը լաթ, կէնիչ քառեօլա մը, ու մինչ տիկինը պիտի կրկնէր պէտք եղածները, երիտասարդը խօսք առնելով,

— Ներեցէք տիկին մայր, արդեօք կարելի՞ է որ գլխու խոզանակ մը գնէիք...

— Անիկայ տօմուզ սօխախիէն կառնենք ետվրում քի հէմ թաղէ հէմ ալ ածան կըլլայ, խօզին միսը ես ալ կը սիրեմ, աղէկ միտքս ձգեցիր...

— Ներեցէք, կարծեմ չի կրցի հասկցնել, մազերս յարգարելու յատուկ խոզանակ մը և սանտր մը, ինչպէս նաեւ ուիլ տ'ամանտ ամէն...

— Դուք հասկըցաք նէ, սիրտը մի կոտրէք, ուզածները տուէք, զէրէ իմ կլոխս տեղը չէ...

— Սալթ գլուխդ չէ տուտու, ինծի կուգայ քի մէջինն ալ տեղը չէ, կ'ըսեն խանութպանները, սնտանելի փորձանքի մը հանգիւած ըլլալուն վրայ սրտմտելով:

— Միւսիւ հրամանքդ երբ կուգաս չափ տալու, պատրաստ կուզեմ չէնէ մի չափու վրայ...

— Բնականաբար չափու վրայ, որպէս զի մարմինս գրկէ...

— Ա՛... հօշընտում, կ'ըսէ տիկինը դէմքը կախելով, ո՛վ է առ գրկողը նայիմ... ես ասանկ փարաներէ թափթփիւմ տէ, դուն կէօլ կէօրէ ինքիդնքդ պաշխասիին գրկել տա՛մ... էյ աֆէրիմ...

— Ճանրմ դուն դող մ'ելլար, քեզի ձգէ տէ՛ ո՛վ պիտի գրկէ, լաթերուն համար կ'ըսէ կոր, դուն մէռաք մընէր...

— Հա շէօյլէ, քի մընաց տամլա պիտի իշնար թէփէյլա...

— Հիմա տամլան ձգենք տէ հիսապի նայինք, գիտէք որ մեր դրութիւնը հարիւրին քսան և հինգը կանխիկ է...

— Համմէ՞...

— Եիւզտէ երմի պէշ փէշին, խուսուրը շաբաթը հարիւրին հինգ... միւթէպէր քէֆիլ...

— Ատոր շիւքէ մ'ունենաք, ես պարտքիս սաղ եմ, տահա անցած նոր ետմուրթածին ալ ատանկ ըսաւ ամա, չորս օր ըսես նէ, հանեցի հինգնոցը տուի տէ մարդը պիլէ շաշիւշ եղաւ...

— Աղէ՛կ ամա, մայրիկս, աս ետմուրթածին հիսապը չըլմանիր, սէնէթ պիտի շինենք, մէկն ալ ետին ճիւղ պիտի ընէ...

— Թամամ ետվրում, լուսերուն մէջը պառկի, ինտոր քի փեսիս ծառքին գիրովը լուսահոգի էրկանս թասվիրին մուխավային վրայ գրեց նէ, ես վաղը կը բերեմ, դուք ալ կը գրէք, ետին ալ ճըռօ կ'ընէք...

—

* * *

Չեմ գիտեր թէ՛ Հէրճայի վաճառատունը իր տարիներէ ի վեր ճանչցած յաճախորդներուն մէջ այս տեսակին հանդիպած էր, սակայն սա չափը ըսենք որ՝ մեր մէջ կան այն տեսակ մայրեր, որոնք իրենց տնամնաց աղջիկը կարգելու համար, պայօր սիրայօժար կ'ընդունին նոյն իսկ փեսին օժիսը պատրաստել, որպէս զի «աղջիկնիս կարգեցինք» ըսեն ու յոխորտան, բայց ինչպէս անշուշտ մեր ազնիւ ընթերցողները գիտեն, այդ կարգի բռնի ամուսնութիւններուն վախճանը կըլլայ միշտ նիւթական աղքատութիւն, բարոյակոյն անկում և ֆիզիքական տխրածութիւն:

Մեր այս տողերուն հաւատ չընծայողներ եթէ կան՝ կրնան դիմել խնդրոյ նիւթ վաճառատունը, որուն մէկ նոր աղբը դրուած է թերթիս շապիկին վրայ, գոյնով՝

ԼԷԼՍ

ՍՊԱՍՈՒՅԻՆ

Պրն. Տգեղեան՝ Նոր սպասուհի մը առած է, որուն սպասուհի ըլլալը ստուգելու համար՝ բաւական մը վկայ պէտք է ...:

Տկն. Տգեղեան՝ Շատ գէշ աչքով կը նայի այս դարավերջիկ սպասուհիին, որ իրմէ աւելի ճոխ կը հագուի ... և կը վախնայ որ էրիկը գլխէ պիտի ելլայ ...:

Մարիամ՝ (սպասուհին)՝ Գեղանի՝ բառին լեցուն նշանակութեամբը ...:

Պ. Տգեղեան. — Տիկին, ալ հարկաւ հանգիստ կընէս կոր, այո՛, Մարիամը գործերդ բաւական մը թեթեւցուց, անանկ չէ՞ ...:

Տկն. Տգեղեան. — (Զայն չհաներ և անդին կը դարձնէ գլուխը):

Պ. Տ. — Ինչո՞ւ ձայն չես տար տիկինն:

Տ. Տ. — (Նորէն ձայն չհանէր):

Պ. Տ. — Գոհ չե՞ս Մարիամէն:

Տ. Տ. — Ինչպէ՞ս գոհ ըլլամ:

Պ. Տ. — Ինչո՞ւ, գոհ չըլլալու ինչ պատճառ կայ որ:

Տ. Տ. — Այո՛, ինչպէս գոհ ըլլամ, քանի որ գործերս, զբաղումներս ինչ որ էին առաջ՝ նոյնը կը մնան հիմայ:

Պ. Տ. — Ինչ կ'ըսես, ըլլալիք բան չէ աս ըսածդ:

Տ. Տ. — Ինչո՞ւ ըլլալիք բան չէ:

Պ. Տ. — Բանի որ ես աչքովս կը տեսնամ կոր անոր աշխատիլը:

Տ. Տ. — Այո՛, կաշխատի, լատտիկներդ կը մաքրէ:

Պ. Տ. — Աղէ՛կ:

Տ. Տ. — Վերարկուդ կը խողանակէ:

Պ. Տ. — Լա՛ւ:

Տ. Տ. — Անկից վերջը, այսինքն ձեր մեկնելէն վերջը ... գործ մը ըրած չունի որ:

Պ. Տ. — Ըսել է օգտակարութիւն մը չունի Մարիամը:

Տ. Տ. — Ո՛չ, ինծի օգտակարութիւն չունի ... և ամսականներն ալ պարապ տեղը պիտի առնէ, մե՛ղք:

Պ. Տ. — Եթէ ատանկ է, ճամբայ տանք Մարիամին:

Տ. Տ. — (Ուրախ) Հապա՛, հապա՛, Լուսաբերը կ'առնենք:

Պ. Տ. — Անանկ է նէ կանչեմ և ներկայութեանդ ամէն բան ըսեմ:

Տ. Տ. — Այո՛, այո՛, ես կը կանչեմ, (կերթայ դուրս և Մարիամին հետ ներս կուգայ):

Պ. Տ. — Ինծի նայէ Մարիամ:

Տ. Տ. — (Ինքներեն) Օ՛խ, վերջապէս սըւիկա դուրս նետել կուտամ կոր ես՝:

Պ. Տ. — (Սպասուհիին) Տիկինը քեզմէ գոհ չէ:

Մարիամ. — Դո՛ւք ալ գոհ չէք պարոն:

Պ. Տ. — Ա՛, ես (չոր մը կը հագայ) դժգոհութիւն մը չունիմ աղջիկս քեզմէ, մինակ թէ տիկինն ալ պէտք է գոհ ձգես:

Մար. — Ձեմ գիտեր որ տիկինը ինչո՞ւ ինձմէ գոհ չէ ... ես ձեռքէս եկածը կ'ընեմ կոր որպէս զի տիկինը մի՛շտ գոհ ձգեմ ... հարկաւ տիկինը չուրանար իմ առաւելութիւններս:

Պ. Տ. — (Տիկինին) Ի՞նչ ըսիք տիկին:

Տ. Տ. — (Զայն չհաներ և գէպի դուռը կը նայի ...):

Պ. Տ. — Աղջիկս, ջանայ որ տիկինը գոհ ձգես ... քեզի ամսականի յաւելում կը խոստանամ ... հայտէ՛ մեզի թէյ բեր:

Մար. — Պիտի ջանամ տիկինը գոհ ձգել ... (կը մեկնի):

Տ. Տ. — Պարո՛ն, ինչու կանչեցիր սպասուհին ... ճամբայ պիտի տայիր նէ:

Պ. Տ. — Հա՛, է՛յ մտածեցի որ, ասկէ ելլայ տէ տեղ չգտնայ նէ, մեղք է աղջիկը, անկից վերջը, խողները ինչ պիտի ըսէին. պիտի ըսէին որ նայէ Տգեղեանէնց սպասուհին ամիս մը պիլէ չկըցաւ կենալ ձեռքերս նուն ...: Ամսականի յաւելում խոստացայ, թերեւս ջանայ և յուսով եմ որ պիտի ջանայ քեզի գոհ ձգել:

Տ. Տ. — (Ծուռ ծուռ Պ. Տգեղեանին աչքին մէջ կը նայի):

Պ. ԳԵՐԵԳՅԱՆ

— Ինչ է աս Պետիկ, նորէն մատներու վը՛ք քիթդ կը խառնես:

— Հապա ինչո՞ւ ծակեր կը գտնուին:

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ՄԵԾ-ՇՈՒԿԱՅ. — Հոս ծանօթ մաս-
խաղաճի մը շարթուս Ապրիլ մէկի խա-
փէութեան մը զոհ գնաց . . . մինչեւ
Գուղկունճուկ, ուր կրկնակ մը խմելէ
վերջ ետ դարձաւ մունջ անխօս :

ՍԱՄԱԹԻԱ. — Տեղւոյս եկեղեցւոյ
երաժիշտէն կը խնդրուի՝ որպէս զի
ներկայ գարնան գեղ մը օգտափութու-
թեան երթայ, ասով ժողովուրդն
ալ բերանփոխ մը ըրած կ'ըլլայ ուրիշ
մը լսելով :

ԵՖՆԻ-ԳԱՐՈՒ. — Հազիւ օգերը
տաքցան թէ ոչ, տեղացի երկսեռ ե-
րիտասարդները սայլանկէօղներու պէս
սկսան իրենց թեւթեւի բռնաճատները
Հիսար-տիպի երկայնքը . . . : (Կը
պաղիք օղլում. Ծ. Խ.) :

ԹՈՒԱՆՏԱՊՈՒԼ. — Կարելոր թաղի
մը կրօնականը կանացի կսմիթ մը կե-
րաւ անցեալ օր խուռն բազմութեան
մէջ, կսմիթ զարնողը փութով պնդու-
թեամբ կը փնտռուի երկու ժամկոչնե-
րու կողմէ : (Այս առտու բաղնիք գա-
ցին ժամկոչ աղբար. Ծ. Խ.) :

ՍԿԻԻՏԱՐ. — Մինչեւ հիմա գիտե-
ինք թէ՛ երեկոյթի մը համար օրի-
որդներ կէս գիշերէն վերջ քաղենալու
համար հետերնին թուղթով բռնուա կը
տանին, բայց ստոյգ աղբիւրէ կը տե-
ղեկանանք թէ՛ օրիորդ մը զոյգ մը
լուսթռին սկառքիները բաքէթ ըրած
հոս հոն սուառեի կը տանի եղէր . . . :

ՆՈՅՆ. — Երեք միացեալ վարժա-
րանաց տեսչութենէն կը խնդրուի որ-
պէս զի երբ տղայ մը պատժել հարկ

ըլլայ, այնպիսի պատիժ մը տնօրինուի
որ իր ֆիզիքականին՝ և որ աւելին է՝
իր ուսանողութեան չի դպի :

ԳԱՏԸ-ԳԻԻՂ. — Կը խնդրուի տե-
ղացի միւսիւններէն՝ որպէս զի Ս. Պատ-
րիարք Հօր քարոզին ժամանակ, ինչ-
պէս ուրիշ ատեններ, «ներսը տեղ
չիգայ» ըսելով՝ հա հա, հի հի չի տե-
սակցին դուրսի բակին մէջ : Կենցաղա-
գիտութիւնը մարդու չէք ի տար, կրօ-
նասիրութիւնն ալ ձեր մօտ պահեցէք :

ԲԵՐԱ. — Անցեալ կիրակի Իտալա-
կան խումբը վայելելու համար Սկիւ-
տարէն խուռներամ հասնող բազմու-
թիւնը՝ երեկոյին ըստ սովորութեան
Սբ. Լանտիտի մէջ տեղ չի գտնալով՝
մահալիպիներու խանութները բազ-
մեցան : (Վա՛խ վա՛խ վա՛խ, չոր-
նամ. Ծ. Խ.) :

ՆՈՅՆ. — Ս. Յարութիւն եկեղեցիի
դպրութիւններուն ձայնը ալ աւելի անուշ
հնչեցնելու համար՝ թարմ հաւկիթ
կլլեցնել յանձնարարուեցաւ մասնա-
գէտներու կողմէ :

ԽՄԱԿԻՐԱՏՈՒՆ. — Կը լսենք թէ՛
այս կիրակի Հիւանդանոցին ի նպաստ
նուագահանդէս մը պիտի տրուի եղէր :
(Մենք ոչ իմացանք ոչ ալ տեղեկու-
թիւն ունինք. Ծ. Խ.) :

Արսոմսկր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Պապը-Ալի Գասէսի քիւ 52.

ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՈՅԵՐՁԵՆՈՅՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուլթան Համամ, Թօփապեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկոսութեամբ և գիներու անմրցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
գիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բեղուններու
և տղայոց շիք և գիմացկուն ֆուֆիւ-
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի և ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զըշ է:

Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին: 50—30



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՅԷՔ

ՓՈՒԹԱՅԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեղալ պէյ խանին,
սակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սոֆիանէ,
Ջիկաստանէ, Հնդկաստանէ, Ճապոնէ եւ Ճա-
պոնէ:

Ամենէն գոհարահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ և փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մտաւային:

Ա Պ Ա Ռ Ի Կ

6 ԱՄԻՍ ՊԱՅՄԱՆԱԺԱՄԷՆ ՅԵՏՈՅ ԱՆՊԱՅՄԱՆ ԱՊԱՌԻԿ
5000Է ԱԻԵԼԻ ՏԵՍԱԿ ԻՐԵՂԵՆՔ 5000

Տեղական և Բարիզի 14 և 18 աստիճան ոսկւոյ վրայ բազմատեսակ գոհարեղէններ, օղ, մատնի, ասեղ, ևայլն. նաև անուններու սկզբնատառով գոհարազարդ մատանիներ, ոսկի, արծաթ ժամացոյցներ և նորաձեւ շղթայներ, ասոնցմէ զատ ամէն եղանակի յատուկ պատրաստ և չափու վրայ զգեստներ, կօշիկներ ու գլխարկներ, արանց, կանանց և տղայոց համար: Նաեւ մուշամպա վերարկուներ, բուրդէ և մետաքսէ շրջագգեստի կերպաններ, պատրաստ ճերմակեղէններ նաեւ խասա, ամերիգան, պասմա, եւայլն. և զարդի վեցրեքեալ պիտոյք, մեքենաներ լուացքի, լուսանկարի, կրամօֆօն, ինչպէս նաեւ կարի (ձօնա. Նովման) ևայլն:

Ունինք նաև եւրոպական նուրբ ճաշակով պատրաստուած կահ կարասիք, հիւրանոցի, ննջասենեակի, ճաշարանի և խոհանոցի վերաբերեալ ամէն իրեղէնք, ամէն տեսակ վառարաններ, նաև բաղնիքի, խոհանոցի եւրոպական շարժուն օճախ ևլն.:

Վաճառատունս իր տեսակին մէջ միակն է որ չահած է հանրութեան վստահութիւնը, գնահատուած է նաև իր ապրանաց տոկոսնութիւնը, նրբութիւնը և աժաւորութիւնը:

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

Շաբաթական և ամսական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են:

Հաճեցէք դիմել ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐԶՈՅ ՄԵԾ ՓՈՂՈՇ ԹԻՒ 13

50—19